ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆՈՐ ՏԵՂԱԿԱԼԸ

20.03.2018 11:11

2018 թվականի մարտի 19-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը Պալատի աշխատակազմին է ներկայացրել Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի նորանշանակ տեղակալ Հունան Տեր-Վարդանյանին: Նա 2010 թվականից փաստաբան է: Ներկայացնում ենք իրավաբանական գիտությունների թեկնածու, փաստաբան Հունան Տեր-Վարդանյանի կենսագրությունը:

Ծնվել է 1983 թվականին:

Կրթություն

2000-2004թթ. Երևանի պետական համալսարանի բակալավրիատ:

2004-2006թթ. Երևանի պետական համալսարանի մագիստրատուրա (քաղաքացիաիրավական բաժին):

2006-2009թթ. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրա:

Աշխատանքային փորձ

2005-2006թթ. ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական փորձաքննությունների վարչության մասնագետ:

2006-2007թթ. ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական փորձաքննությունների վարչության ավագ մասնագետ:

2007-2008թթ. ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի խորհրդական:

2008-2012թթ. ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական (քաղաքացիական և վարչական գործերով):

2012- 2018թթ. «Տեր-Վարդանյան» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ (փասաբան):

Գիտական և դասախոսական գործունեություն.

2009թ. «*Արդար դատաքննության իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը Հայաստանի Հարապետությունում*» թեմայով ասպիրանտական ատենախոսության համար շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2012-2014թթ. Հայաստանի Պետական Մանկավարժական Համալսարանի դասախոս (Պետության և իրավունքի տեսություն, ՀՀ սահմանադրական իրավունք):

2014թ.-մինչև այժմ. ՀՀ Արդարադատության ակադեմիայի դասախոս («ՄԻԵԴ նախադեպային իրավունքը քաղաքացիական դատավարությունում»):

2009թ.-մինչ այժմ. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դասախոս («ՀՀ քաղաքացիական իրավունք» և «Մարդու իրավունքների հիմնահարցերը»):

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })